

սօր անկիւն չկայ որ նոյն Հոգւով մկրտուած մարդիկ աւետարան չքարոզեն— և սակայն ... որչափ կենդանութեամբ է գործում արգեօք Հոգին մկրտուածներէ մէջ: Արտաքին ոչ մի ոյժ Սորա վերայ բռնանալ, Սորան մեռցնել հարկաւ չէ կարող. բայց եթէ իրենք՝ Հոգին կրողները, Սորա զօրութեան ենթարկուել, Սորա գործունէութեան ազատ ասպարէզ տալ չկամենան ... Ծշմարտութեան Հոգին հոգւով և ճշմարտութեամբ միայն ընդունել՝ Սորա առատ շնորհներն մաքուր սրտի մէջ միայն տարւորել և արդիւնաւորել կարելի է. իսկ եթէ մարմինը մեր մէջ այնքան իշխանութիւն ունի, որ Հոգու շարժումներէ համար տեղ չի մնում. եթէ մենք այնքան վարժուել ենք կեղծիքն իբրեւ իրականութիւն, առան իբրեւ մարդոց փոխադարձ յարաբերութեան կանոն ընդունելու, որ ճշմարտութիւն տեսնելու աչք չունենք. եթէ մեր սիրան այնչափ ապականուած է և կոշտացած, որ մատչելի չէ այլ ևս վսեմական Հոգւոյ ներշնչումներին՝ աղ- նիւ և սուրբ զգացումներին ... Այն ժամանակ այն Հոգին մեր մէջ հաստատուել և մեզ նո- րոգել չի կարող. բայց մենք մարդկութիւն չենք. Սա կգանէ միշտ զէպի վերինն ու ա- տուածայինն ուղղուած, երկնքի պայծառ ու մաքուր եթերը շնչել փափագող, բա- րոյական ու զազափարական ձգտման համար պատրաստ հոգիներ, որոնց մէջ թափէ Ուր շնորհները. և այդ Կենդանարար Հոգու աղ- ղեցութիւնը երբէք չի պակասի մեր այս մա- հուան ու ապականութեան ենթակայ աշխար- հից՝ մինչև կգայ Սա, որ նոյն Հոգին աշ- խարհ ուղարկեց և հոգեւոր վերանորոգութեան սկիզբ դրաւ՝ կգայ և ի կատարումն կհասցնէ, հոգեւորն ի կեանս հրաւիրելով և մարմնաւորը մահուան դատապարտելով: Վայ մեզ է, եթէ յամուենք մեր մարմնական ցանկութեանց մէջ և ասպարէզ չաանք ս. Հոգւոյ շնորհներին, որ աւագանի մկրտութեամբ իբրեւ ճշմարիտ կեանքի առհաստատ ընդունեցինք. Այդ- չափ անմիւս է, ք, բացականչում է Առաքեալը. սկսեալ Հոգւով՝ և արդ մարմնով վախճանիք: Զարմացման և զայրոյթի այդ աղաղակը պէտք է լսելի լինի ամբողջ քրիստոնեայ աշխար- հում, երբ ս. Հոգւոյ զալստեան աօնն է կա-

տարուում՝ այնտեղ՝ պէտք է սթափեցնէ թըմ- րած մտքերն ու ցածուցանէ մոյլ կրքերը:— Ծշմարտութեան Հոգին սաւառնում է այդ պահուն ինչպէս մեզմ՝ զեփիւռը, մեր շուրջ և մեռք է որոնում. բանակը Սորա առաջ մեր սիրան ու հոգին:

Կ. Վ.



ԿՈՉՄԵՆ ԿԱՐԵԹՐՈՒԹԻՒՆԸ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԸ ՏԵՍԵԿԵՏԻԹ.

ԱՐԵՏԱՐԱՆԻ մէջ շատ կան ինչպէս յայտնի է, զարձուածներ, որոնք տրամադրում են կարծելու, թէ մեր Փրկիչը աշխարհային ամէն զբաղմունք աւելորդ բնու է համարել և խոչընդոտ երկնքի արքայու- թեան: Այդ կարծիքը մեծապէս նպաստել է կրօնաւորական կեանքի զարգանալուն քրիս- տոնէական եկեղեցւոյ մէջ. աշխարհը մեզ կաշկանդում է և սարկացնում իւր հրա- պոյրներով. աշխարհը մեզ ծանրաբեռնում է իւր հոգսերով և ժամանակ չի տալիս երկ- նաւորի մասին մտածելու. պէտք է ուրեմն կտրուել նորա շղթաները և թօթափել նորա լուծը մեր վերայից, որպէս զի բոլոր հոգւով Աստուծուն նուիրուել, Աստուծոյ հետ ան- միջական յարաբերութեան մէջ լինել և Սորա կամքը սրբութեամբ կատարել կարողանանք: Գիտենք սակայն, որ աշխարհի վերայ ապրողը աշխարհից փախել չի կարող. որչափ հեռու փախենք, այնչափ արագ կգայ նա մեր ետե- լից և վերջ ի վերջոյ ստիպուած պէտք է լինինք կանգնել ու հաշիւ տեսնել նորա հետ. Փրկիչը մեզ ոչ թէ փախել, այլ նորան յաղ- թել է սովորեցրել և Յկեղեցին զնահատելով ու փառարանելով հանդերձ այն մարդոց ան- ձնապահութիւնը, որոնք ճշմարիտ աստուածա- յին սիրով վառուած կամ մի բարձր նպա- տակով ոգևորուած տուն ու տեղ թողել, աշխարհային բոլոր կապերը խզել և անա- պատներ իւր քարանձաւներէ մէջ ձգնելով՝

Հրեշտակակրօն կեանքի օրինակ են հանդիսացել այնուամենայնիւ թող չի տուել այն մոլորութեան մէջ թաղուելու թէ աշխարհից փախչելն ըստ ինքեան առաքինութիւն է, և չի դադարել յիշեցնելու այն հեղգասիրտներին որոնք Աստուծոյ սէրը պատճառ բերելով խոյս են տալիս երկրի վերայ ունեցած պարտականութիւններէն՝ առաքելական պատգամը։

Որ ոչ սիրէ զեղբայր իւրի զոր տեսանէ, զԱստուծոյ զոր ոչն ետես՝ զհաճիկ կարիցէ սիրել։ Եթէ աւետարանն առանձին կերպով շեշտում է նիւթական բարեաց ոչինչ լինելը և պատուիրում է չհոգալ վաղուայ մասին՝ պատճառն այն է միայն, որ մարդիկ չափաւանց մեծ նշանակութիւն են տալիս զոցա՝ էական և տիրական նշանակութիւն մինչ զոցա զերբ երկրորդական է և ծառայական մարդոց մեծագոյն մասը զոցանից զուրս ուրիշ բարիք չի ձանաչում և անդադար հոգսի մէջ լինելով զոցա բազմացման համար՝ միջոց չի ունենում իւր ներքին կեանքի իւր իսկական պէտքերի մասին մտածելու։ Ապա թէ ոչ՝ մեր քրիստոնէական հաւատը մեզ սովորեցնում է, որ Աստուծոյ ստեղծած ամէն ինչ բարի է և բարի նպատակի համար, մենք ոչ միայն իրաւունքն ունենք, այլ և պարտականութիւն ունինք մեր մտքի և ձեռքի բոլոր ծառայութիւնը զործ գնելու, որպէս զի շրջապատող բնութիւնը նուաճներ և ըստ կարելոյն շատ միջոցներ ձեռք բերենք մեր կեանքը ապահովելու, ծոխացնելու, ազնուացնելու համար։ Աւետարանը չի վերացնում այն աստուածադիր առաջին պատուէրը, որի համաձայն մարդ իւր ձակատի քրտինքով պէտք է ձեռք բերէ իւր հացը, և ով քրտինք չի թափում, չի աշխատում՝ արժանի չէ ուտելու։ Ընդհակառակն ըմբռնել տալով, որ Աստուծոյ մեր Երկնաւոր Հայրն է, սովորեցնում է ամբողջ մարդկութեան իրեւ մի մեծ ընտանիքի վերայ նայել, որի իւրաքանչիւր անդամն իւր որոշ գործն ու պարտականութիւնն ունի կատարելու, ունի ուրիշ խօսքով իւր որոշ կոչումը, և նայած թէ որչափ հաւատարիմ է իւր կոչման, որչափ ճշտութեամբ է կատարում իւր պարտականութիւնները՝ ըստ այնմ և դնահատելի է նորա աշխատանքը։ Ոչ որ

ուրեմն առանց կոչման չպէտք է լինի, ոչ որ զուր տեղ չպէտք է բռնի այս աշխարհում, մի այդի է այդ, որի տնկողը պարտաւ մարդիկ չի սիրում, այլ բոլորին մշակութեան է հրաւիրում՝ առատ վարձ խոտանալով աշխատողին, ոչ որի համար աշխատելն ուշ չհամարելով, ոչ որի աշխատութեան կարողութիւնը՝ ամենափոքրն անգամ, չարհամարհելով։ Խնդիրը միայն այն է, թէ մենք իբրեւ քրիստոնէայ ինչպէս պէտք է ըմբռնենք մեր կոչումը, ինչ բանի մէջ տեսնենք աշխատութեան նպատակը։

Երկայումս մեզանում շատ սխալ հասկացողութիւն է տիրում կոչման մասին։ Երբ ընտանեկան կամ դպրոցական կրթութեան ժամանակն անցնում է՝ ծնողները որդւոց համար անկախ զիրք ունեցող որդիք իրենց անձի համար՝ այն չեն մտածում, թէ ինչ գործի մէջ աւելի յաջող և օգտակար կերպով գործադրել կարող են ունեցած ընդունակութիւններն ու ձեռք բերած հմտութիւնները, այլ թէ ինչ գործ բռնեն, որ աւելի շահ բերէ, որ աւելի ռոճիկ ստանան կամ հարստանան։ Այսպէս, հաստատուն կոչումն ունեցող մարդիկ քանի գնում պակասում են, ամենքը պատրաստ են կարծես թողնել իրենց սկսած կամ հայրերից ժառանգութիւն ստացած գործը և մի ընդհանուր ձանադարհով գնալ, որ ամէնից կարճն ու հանդիսան է երևում հարստութեան հասնելու համար՝ պատրաստ են աւետարական դռնալ՝ բառի ընդարձակ նշանակութեամբ։ Գիւղացին արհեստաւորը, ուսուցիչը—եթէ արդար վատակով մի քանի հարիւր բուրլի դրամ է խնայում՝ չի մտածում այլ ևս, որ նորանով միջոցներ ձեռք բերէ (հոյ գործիքներ, գրքեր, գնէ) իւր գործունէութեան շրջանակն ընդարձակելու և աւելի արդիւնք ցոյց տալու, այլ խանութ է բաց անում կամ եթէ լսում է, այս ինչ հեռաւոր քաղաքում կարելի է հեշտութեամբ բաղդ զսնել՝ տուն տեղ, աշխատանք թողնում՝ շտապում է այնտեղ։ Հարկաւ ամէնքը յաջողութիւն չեն ունենում և մեծ բաղդի հասնում, այլ յաճախ երեւակայականի ետեւից ընկնելով՝ ունեցած իրական պատառն էլ կորցնում են և իրենց անձի կորուստը պատրաստում բայց եթէ բաղդաւոր-

ներ աւելի բազմաթիւ իսկ լինելին՝ հետեան-
քը միշտ անմիջական է: Մարդոց իսկա-
կան հարստութիւնը աշխարհիս վերայ՝ գոր-
ծելու ոյժն է, և մի ժողովուրդի անասնական
վիճակը կրարւոքուի և կենսական զօրութիւ-
նը կաւելանայ միայն այն ժամանակ, երբ նո-
րա ամբարած նիւթական բարիքն այդ ոյժը
բազմապատկելու և ոչ թէ մեղցնելու է նպա-
տում: Իսկ մեր այժմեան հասարակական կեան-
քի զարգացումը ըստ երևութիւն պէտք է հա-
կառակ հետեանքին հասցնէ: Բազմաթիւ իրենքի
այն բանակը, որի համար գանձ զիջելը բարձրա-
դոյն նպատակ է և անաշխատ կերպով վայել-
ելը կատարեալ երջանկութիւն՝ բաղկացած է
երկու հակառակ տարրերից, որոնց ոչ մէկը
կենսունակ ոյժ չի ներկայացնում: Բազմաթիւ
դժգոհ մեծամասնութիւնը թաղուում է իւր
յոյսերի վիշտակներին՝ բազմաթիւ գոհ վոքերու-
մանութիւնը անակնկալ ձոխութիւնների
բեռան տակ, երկու կողմն ևս սնանկանում է
անհրաժեշտաբար թէ նիւթապէս և թէ բա-
րոյսպէս, նիւթապէս՝ որովհետեւ ձգտումները
պահանջից և կարողութիւնից աւելի են, բա-
րոյսպէս՝ որովհետեւ աններելի միջոցներով
բազմի հասնել աւելի հեշտ է համարուում
քան ներելի միջոցներով: Եւ ի՞նչն է այս բա-
ւորի պատճառը, եթէ ոչ այն մոլար կարծիքը,
թէ մարդ վայելելու համար է ապրում և
ուրեմն անդադար այն կողմը պէտք է դառ-
նայ, ուր վայելքի աւելի առատ միջոցներ
գտնել կարելի է: Բայց մարդ վայելելու
համար չի ապրում. իւր Արարչից նա որոշ
կարողութիւններ և ընդունակութիւններ է
ստացել, որ պէտք է գործադրէ ի կատարե-
լութիւն անձին և ի բարօրութիւն իւր մեղ-
ձաւորների: Քրիստոնէական հաւատը մեզ ա-
սում է, որ մեր կեանքը աննպատակ խաղ չէ,
որ ամբողջ մարդկութեան առաջ մի բարձր
նպատակ կայ դրած, և իւրաքանչիւր անհատի
կեանքը նոյն չափով աւել գնահատելի է, ոչ-
չափ աւելի մեծ է նորա գործակցութիւնը
ընդհանուր մարդկութեան դէպի այդ նպա-
տակը տանող աշխատանքի մէջ: Իւրաքանչիւր
քրիստոնէայ պարտաւոր է, ուրեմն որոշ աշ-
խատութիւն յանձն առնել՝ այն գիտակցու-
թեամբ, թէ մարդկութեան աշխատանքի մի

մասն է յանձն առնում և եթէ չաշխատե-
անգամ չէ մարդկութեան և իրաւունք չունի
նաե նորան վիճակուած բարիքից իւր բաժինն
առնելու. իսկ որովհետեւ աշխատանքն այն
ժամանակ արդիւնաւոր է, երբ տեական է,
անհատի կարողութեան և շրջապատող պայ-
մաններին համապատասխան, ուրեմն իւրաքան-
չիւր դե պիտի տեական, իւր բոլոր կար-
ողութիւնները կատարեալ կերպով հանդէս բե-
րող և ընդհանուր բարօրութեան նպաստող
աշխատանք պէտք է ունենայ, որ նշանակում
է ուրիշ խօսքով մի հաստատուն կոչում ու-
նենալ:

Հարկաւ հասարակական կեանքի պայման-
ներն այնպէս են, որ ամէն դե միջոց չունի
իւր ցանկացած կոչումն ընտրելու, և կան ան-
հատներ, որոնք ի բնէ զրկուած են որե
կոչում՝ ստանձնելու հնարաւորութիւնից:
Ակներեւ է սակայն, որ նաե այս ինչպէս ուրիշ
ամէն տեղերում՝ խիստ շատ բան կախուած
է առաջնորդող գաղափարից, հասարակութեան
մէջ տիրապետող համոզումներից: Ո՛չ դե այն
լինել չի կարող, ինչ որ ինքը ցանկանում է,
բայց ամէնքը կարող են աւելի կատարեալ և
հասարակութեան աւելի օգտակար անդամ
լինել, քան են, եթէ աշխատութիւնը մի բեռ
չհամարեն, որ վայր դնել պէտք է, երբ տա-
նելը ստիպողական չլինի, այլ մի նուիրական
պարտականութիւն, որը կատարելու համար
իսկ ապրում են և որ ուրեմն պարտաւորե-
ցուցիչ է ամէնքի համար անխախտ՝ իւրաքան-
չիւրին իւր կարողութեան չափով, իրեն վի-
ճակուած պայմաններում: Եւ որպէս զի ոչ դե
դժգոհ չմնայ աշխատութեան բաժանումից՝
պէտք է ի նկատի ունենայ, որ ընդհանուր
գաղափարի—քրոստոնէութեան՝ տեսակէտից
բոլոր աշխատութիւնները իրենց տեղն ունին
և ամէն կոչում հաւասարաչափ արժէք: Այն
կատարեալ կեանքը իւր բարոյական հիմունք-
ներով, որ քրիստոնէութիւնը գծում է մեր
առաջ զարգանալ կարող է միայն ընկերական
յարաբերութեան մէջ, և միջոցներ այդպիսի
կեանք պահպանելու և զարգացնելու համար
կարող ենք ձեռք բերել մէնք միայն ընդհա-
նուր գործակցութեամբ. իսկ որտեղ գործա-
կցութիւն, որտեղ համայնական աշխատանք

կայ՝ այնտեղ իւրաքանչիւր մի անկամը նոյն-
չափ կարեւոր է, որչափ և միւսը: Ծառ հին,
նաեւ հեթանոսական աշխարհին ծանօթ ծը-
մարտութիւն է այդ, բայց քրիստոնէութեան
մէջ առանձին նշանակութիւն է ստանում նո-
րանով, որ այստեղ գործը բաժանողը, իւրա-
քանչիւրին իւր աշխատութեան համեմատ
փարձատրողը և արդիւնքը ժողովոյն Աստուած
է, մեր Երկնաւոր Հայրը, որ մարդկային
չափերով չի չափում և աշխատաւորներին
այլ և այլ անձնաշնորհութիւնների համեմատ
առաւելութիւն տալիս, այլ նայում է, թէ
ո՞վ ինչպէս է կատարել իւր պարտքը, որ-
չափ շահեցրել իրեն տուած քանքարը: Ծորա
համար նշանակութիւն չունի թէ, մէկը նա-
խարար է եղել, ամբողջ երկիր կառավարել,
միւսը մի հասարակ գրագիր, որ կպած մնա-
ցել է իւր գրասեղանին, մէկը քահանայապետ
է եղել, Աստուծոյ սեղանից օրհնութիւն բաշ-
խել ժողովրդին՝ միւսը ժամկոչ, որ աւելել է
այդ սեղանի պատուանդանը, մէկը իւր հարըս-
տութեամբ կամ գիտութեամբ սարեր է տե-
ղից հանել և զետեղ շրջել՝ միւսը միայն իրեն
աշխատող ձեռք բանել է, մէկը հասարակա-
կան պաշտօնի մէջ է եղել, միւսը իւր ընտա-
նիքի իւր զաւակների հոգսը քաշել, ամէ-
քը հաւատար են այստեղ: Այն ահագին տրե-
տեսութեան մէջ, որի ղեկավարը մեր Երկնա-
ւոր Հայրն է, անպէտք անօթ չկայ՝ ամէնքն
իրենց կոչումն ունին, կոչում՝ ունին նաեւ
կազմերը, կոյրերը, անդամալոյծները, որոնք ի-
րենց թշուառ պատկերով զթութեան զգաց-
մունք են զարթեցնում մեր մէջ և սովորե-
ցնում աշխատել ընկերի համար այնպէս, ինչ-
պէս թէ մեր համար աշխատակիք, նոքա հիւ-
րերն են Աստուծոյ սեղանի, որի մօտ բազմե-
լու իրաւունք չունին միայն ծոյլ ծառաները,
մարդկութեան մեծ ընտանիքի անդործ ան-
դամները՝ բոլորեքեան նոքա, որոնք ոչ
մի կոչում չեն ընտրել, ոչ մի աշխատանք
չունին, այլ գողանում և վայելում են հա-
սարակաց աշխատութեան պտուղները—գողա-
նում են կամ՝ ական փորելով և տանելով,
կամ մուրացկանութեամբ ձեռք պարզելով,
կամ հասարակաց դանձարանում մեռնալ դէ-
րամագլուխ շահեցնելով և ներկայանալով իրեն

իրաւատէր օտարի վատաւորը, լինի այդ օտա-
րը իւր հայրը, իւր եղբայրը:

Կ. Վ.



ԻՆՉ Է ԵՐԶԱՆԿՈՒԹԻՒՆԸ.

ԻՆՉ է երջանկութիւնը, որոնք են
նորա էական պայմանները, ինչ է պահան-
ջուում իրօք երջանիկ լինելու համար աշ-
խարհիս վրայ—ահա հարցեր, որոնց պատա-
խանք փորձել են տալ բոլոր իմաստասէրնե-
րը՝ սկսած ամենահին ժամանակներից: Երջա-
նիկ ապրելու ցանկութիւնը միշտ յատուկ է
եղել մարդկանց, այդ ցանկութիւնը միշտ էլ
կունենան նոքա, ուստի և բարոյագիտութեան
մէջ միշտ բնականաբար ամենակարեւոր տեղը
պիտի ունենան երջանկութեան գաղափարը և
երջանկութիւնը պայմանաւորող հանգամանե-
րների վերաբերեալ խնդիրները:

Բայց մի՞թէ, դարերի ընթացքում յա-
ռաջ խաղացող քաղաքակրթութիւնը մեզ մին-
չեւ այսօր ցոյց չէ տուել, թէ որոնք են ճշ-
մարիտ երջանկութեան պայմանները, թէ ինչ
պիտի անենք, ինչպէս պիտի ապրենք, որ եր-
ջանիկ լինինք: Զրիստոնէի համար դժուար չէ
այդ ցուցումները գտնել Երկնաւոր Ուսուցչի
փարկապետութեան մէջ, եթէ միայն նա ճշ-
մարտապէս հաւատում է, որ Փրկչին հեռեկե-
լով անպատճառ հասնելու է երջանկութեան.
Բայց ո՞վ չէ տեսնում, որ մարդկութիւնը դեռ
չստացել է այն կեանքից, որ առաջարկում
է նորան Զրիստոս, ո՞վ չի խոստովանել, որ
զեռ Աւետարանի ուսումը չէ մեր առաջնոր-
դը, որ երջանիկ ապրելու համար մենք բնաւ
այն չենք որոնում, ինչ որ ցոյց է տալիս Փր-
կիչը: Մենք կառավորուում ենք մեր սու-
րեայ կեանքում մի ուրիշ փարկապետութեամբ,
որ ոչինչ առնչութիւն չունի Զրիստոսի փար-
կապետութեան հետ, այդ երկու ուսումը
Արևմտեայ միջն յայն աստիճան հակառակ են, որ
կարող ենք հաւատաւ տալ թէ, մարդ մեկին հե-
տեկելով՝ անպատճառ միւսի հակառակ է գոր-